ՀԱՏՈՐ ԽԹ 1891 ՄԱՅԻՍ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐՉԱԳՐԱՑ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ

(Տես յէջ 97, շարունակութիւն)

Գ. օրինակ, մաքուր ու բարակ յղկուած մագաղաթի վրայ, ընտիր՝ միակերպ, անսխալ ու վարժ մանր բոլորգրով. (թիւ գրչ. 1006). երկայն 0·25. լայն 0·17. առանց զարդուց և պատկերաց, տեղ տեղ միայն կարմրագոյն խոշոր տառերով ի գլուխս գրոցն, և նոյնպիսի զարդուք ի լուսանցս։ Ամբողջ աստուածաշունչ գիրքն, ի Մնդոց մինչև ի Հանգիստան Յովհաննու, որ անկատար կը մնայ, պակասելով վերջին թուղթն, որով և թուական գրչութեանն և յիշատակարան, եթէ ունէր. բովանդակ 1162 էջք. յորոց իւրաքանչիւրն յերկու սիւնակս, և ամէն սիւնակ՝ քառասունեօթն տողք ընդհանրապէս։ Ի լուսանցն՝ նշանակին համեմատութիւնք գլխոց ընդ լատինականին որոշելով ՅՏ տառիւ։

Մին ի վերջին սաստոդաց Յովհաննէս մայազ կարդրցի, ինչպէս կ'ակ-

digitised by A.R.A.R.@

նարկէ յառաջին պարապ իջի գրուած հետևեալ նոր յիշատակագրութիւնը. «Աստուածածնին զսկիզբն արի աստուածաշունչին՝ ես Յովհաննէս մալազս Կարկրցի. ելայ քաղաքն եկի, երկու տարի պարապ կացի, բայց այս տարի գիրք կարդացի»։

Դ. Օրինակ, (Թիւ գրչ. 1007). ի Թուղթ բամբակի, մանր բոլորգիր ընտիր և ուղղագիր։ Գրեալ ի Թուին Հայոց ՉՁԱ = 1330։ Իւրաքանչիւր էջ յերկուս սիւնակս. ամէն սիւնակ՝ յիսուն տող ընդհանրապէս։ Երկայնութիւն գրչագրին 0.23. լայնութիւն 0.15։ Դասաւորութիւն սուրբ գրոց՝ նման նախընթացին։

Յիշատակարանք՝ աւելի մանրագիր։ Ի վերջ Ելից. «Զցաւօք լցեալ և զհոգով տառապեալ մեղապարտ, սուտանուն, անպիտան ի կարգաւորաց եկեղեցւոյ. Ներսէս անուամբ այրեղա, և գործով խաբեղա, աղաչեմ յիշել ի տէր միով տէր ողորմայիւ, որ զսակաւ ջնջեալ գրերս գրեցի. և Քրիստոս աստուած զձեզ յէական փառսն իւր յիշէ»։

Ի վերջ Ղեւտականին. «Զստացող սորա զՆերսէս վարդ և զանպիտան ծրողս զԴաւիթ յիշել ի տէր աղաչեմ. և զուք հետ յիշ»։

Ի վերջ Նախադրութեան Թուոց. «Զստացող սուրբ գրոցս զՆերսէս պատուական րաբունի, և զանպիտան ծրողս զԴաւիթ յիշել ի տէր աստուած աղաչեմ»։ Նոյն յիշատակարան կրկնուած ի վերջ Երկրորդման օրինաց, և այլ տեղուանք՝ զոր աւելորդ կը համարիմք երկրորդել։

Ի վերջ չորրորդ Թագաւորութեանց. «Զստացող աստուածաշունչ մատենիս զՆերսէս րաբունին աղաչեմ յիշել յողորմութիւնն Քրիստոսի ծնօղօք և ամենայն արեան մերձաւորօք։ Նա եւս և զհողոյ հաւասար գծողս զսուտանուն քահանայ Եփ. և որ յիշէք՝ յիշեալ լիջիք»։ (Տարբեր գրչութեամբ). «Զմեղուցեալ անձն և զտառապեալ ոգի Յով" որ վերստին եղէ աշխատող ի սուրբ աստուածաշունչս յիշեցէք ի տէր աղաչեմ. և մի մեղադրէք զի խիստ էր եղծեալ»։

Յետ Նախադրութեան գրոցն Տովբիթայ (տարբեր և նորագոյն կարմիր գրչութեամբ). «Զեղկասան չարդրանեցին և զհօրեղբօրորդին իւր ըզՏօղանն, յիշեսցէ Քրիստոս աստուած յաւուրն դատաստանի. վասն զի ըստ իւրեանց կարօղութեանն օգնեցին»։ Ի վերջ նոյն գրոց. «Փառաւքն հաւր ամենակարօղի և իմաստութեամբ որդւոյ նորին միածնի և բարութեամբ հոգոյն սրբոյ ճշմարտի։ Երից միակ ի միասնական սուրբ երրորդութեանըն։ Եւ ողորմութեամբ սրբոյ աստուածածնին. և առաջնորդութեամբ գլխաւորի վեհագոյն սրբոյն Պետրոսի. և ամենայն սրբոց երկնաւորաց և երկրաւորաց. աւարտումն եղև այսմ աստուածաշունչ հին և նոր կտակարանիս։ Յորժամ էր Թիւն ըստ շրջագաութեան ժամանակի, ի մարդեղութենէն Քրիստոսի ՌԳՃԼ, և ի Թուականութեանն հակաղնեանս տոհմի ՉՁԱ և ի հայրութեան տեառն Յոհաննիսի մեծի Հռոմայ պապին. և ի պատրիարգութեանն տէր Յակոբայ Հայոց նահանգի. և յեպիսկոպոսութեանն տէր Զաքարիաի սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի. և ի վարդապետութեան... ինա րաբունապետի, որ այժմ կոչի Վայոց ձորի, և յաշխարհակալութեան ղան Պուսաիդի, և Թագաւորութեան Հառոյ Լեւոնի որդւո Աւշնի, զսա սկսեալ ի դեկտէմբերի, աւարտեցաւ ի հոկտէմբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարի։ Ես Ներսէս անուամբ վարդապետ, բայց գործով վերջացեալ. հող և մոխիր վարդապետացդ. որդի Վահրամա, յաշխարհէ Տարաունու, ի գաւառէն Սանսնու, ի վանացն Ղազարու, ի գեղջէն որ

կոչի Կոռ․ Եղէ ցանկացող ուսման, և ընթացա յարևելս ի գաւառն Վայոց ձոր, ի վանքն Գայլիձոր. և ութն ամ աշխատեցայ ի վարժումն հին և նոր տառից և այլ բազում սրբոց բանից. յայնմ ժամանակին եմուտ ի հոգիս իմ ցանկութիւն մեծ վասն աստուածաշունչ գրոց. և ես էի աղքատ և ոչինչ ունի և ոչ փող մի բայց միայն զՔրիստոս. ապա ուխտ եդեալ ի մտի իմում ասացի թէ տա ինձ աստուած իրք՝ նա ես յաստուածածնի անուն տամ գրել. յորժամ զայս խորհուրդս ի միտս իմ արարի, յայնժամ դէմ եդեալ գնացի յերկիրն Ուրնու(?) ի գեղն որ կոչի Խանակահ, առ եղբարք իմ և առ ամենայն արեան մերձաւորքն խնդրել աւգնութիւն ի նոցանէ. իսկ նոքա շարժեալ սիրով և լի սրտիւ ողորմութեամբ սուրբ աստուածածնին, ետուն ի ծախս աստուածաշնչիս իւրաքանչիւր ըստ կարողութեան իւրում մասն յիշատակի. Մլեհն ԲՃԺ սպ". եղբայր նորա Լևոն Ղ դրամ... (յիշատակագիրն մի առ մի կը նշանակէ զանուանս և զտուրս նուիրատուացն)։ Իմ առեալ զայն գնացի յաշխարհն պարսից ի քաղաքն Թավրէժ, յաղագս քարտիսի, և բազում աշխատանք կրեցի ի ճանապարհն. և յոլով նախանձ և նեղութիւն յագահ և ի սնապարծ քահանայից և ի հակառակող աշխարհականաց։ Եւ անտի ողորմութեամբն աստուծոյ յարուցեալ գնացի միւսանգամ ի Գայլիձորն. և կալայ միջնորդ զՅոհաննէս մեծին զեղբայրն իմ հոգևոր՝ որ առնէր միջնորդութիւն ընդ իս և ընդ երկու գրագիր, ընդ Եփրեմին և ընդ Դաւիթն որ էին կուսան քահանայք. և ապա ի բազում աւուրս հազիւ կարացաք կտրել գրելն առանց այլ խարճի ՌՇՃ դր. բայց յետոյ գրկեց զիս Դաւիթն. քանզի խիստ ագահ էր և արծաթասէր. և ԳՃ դր. այլ ել յինէն. վասն որոյ թողցէ աստուած զանցանսն նորա։ Եւ ես յայնժամ յարեայ անտի և գնացի ի սուրբ առաքեալն Թադէոս, առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս. և նա ետ ինձ Շ դր. և յետ բազում աւուրց դարձա վերստին ի Գայլիձոր բազում նեղութեամբ. քանզի ձմեռն էր աւուրքն, և վճարեցի զմնացեալ պարտքն յաստուածաշունչ գրոցն. և դարձա ի սուրբ Առաքեալքն և դադարեցի անդ սակաւ աւուրս, և կայր աստուածաշունչն կազմել. և ես թշուառականս կաի հիւանդ հոգով և մարմնով. ապա խնդրեցի ի սուրբ աստուածածնէն և նա զաւրացոյց զիս. և յարուցեալ պնդեցի զմէջս իմ, և ուղղեալ գնացի ի Քռնայ առ սուրբ եպիսկոպոսն տէր Բարդողիմոս և առ վարդապետքն Հայոց առ Նմա կային յայնժամ. և Մարուգէ վարդապետն չէր անդ որ կազմող էր գրոց, այլ գնացեալ էր ի Ճահուկ. և ի ներգործութենէ չարին ես հիւանդացայ մերձ ի մահ զաւուրս Խե. և Քրիստոս յարոյց զիս և գնացի ի Ճահուկ առ Մարուգէ վարդապետն. և նա յանձն առեալ կազմեաց յաւուրս Ժ և ետ ցիս։ Եւ իմ ուրախացեալ դէմ եդի գընալ յերկիրն Տարաւնու. և ամենևին ոչ ունի խարճ ճանապարհին. յայնժամ ծախեցի զփիլոն և զհողաթափն վասն խարճի։ Ապա զայս գիտասջիք եղբարք որ գնալս և գալս զոր ասացի ի բազում տեղի էր ի միջի բարբարոս ազգաց... որ բռնացեալ ունին զաշխարհս Հայոց վասն մեղաց մերոց. և յամենայն տեղիս օգնեց ինձ սուրբ աստուածածինն և անվընաս մնացի և զամենայն թերի զոր ունէի ելից և կատարեաց. բայց խարճըն որ եղև այս աստուածաշունչ գրոցս՝ ընդ ամենայն միահամուռ ԲՌԲՃ դրամ է։ Տէր աստուած Յիսուս Քրիստոս գրեսցէ զամենայն յաւժանդակողքն որ շատ և որ սակաւ ամենայն արժանաւորաւքն ի գիր կենաց զառինն յաւիտենից և առաջնորդեսցէ նոցա յաղբիւրն ջրոյ կենդանոյ, ամէն։ Ի վերջ Սաղմոսաց. «Զստացող սուրբ գրոցս զՆերսէս պատուական վար-

digitised by A.R.A.R.@

գաղետ և զանպիտան ծրողս զԴաւիթ յիշել ի տէր Յիսուս աղաչեմ. ԹՐՍ»։

Իմաստութեան գրքէն ետքը՝ սովորական համառօտ յիշատակարանն, և ապա Սիրաք՝ այս վերնագրով, «Գիրք Սիրաքա որ կոչեցաւ Յեսուս»։ Ի վերջ ողբոցն Երեմիայ՝ ընդ Ներսիսի և Դաւթի՝ կարմրագիր աւելցած է և անուն Թորոսի՝ շատ անգամ՝ գրուած երկտող յիշատակարանին մէջ։ Ի լրըման Եզեկիելի գրոց կամ հին կտակարանաց. «փառք և գոհութիւն մատուցանեմ ես կարկառեալ զձեռս իմ հօր անծնելութեանն, և որդւոյ նորին և բանին ծնելութեան, և հոգւոյն սրբոյ ի նոցունցն յէութենէ բղխողութեանն որ միշտ լինի զամենայն այժմ և յանսպառ յաւիտեանս։ զի հասոյց զտկարութիւնս իմ ի կատարումն աստուածաբան մարգարէիցս։ Արդ խընդրեմ յամենեցունց յերես անկեալ, զի որք պատահիք առ ի սմանէ օգտութեան՝ թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ ստացողի սուրբ գրոցս, Ներսէս վարդ. և տառապեալ ոգւոյ Դաւիթ գրչի. և դուք յիշօղք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։ Նաև զպատուական քահանայ զՕհանէս սպասաւոր բանի, և զհոգևոր երկնողն իւր զտէր Ստեփանոս զհանգուցեալն ի Քս" որ զօրինակըս շնորհեաց այս երեք գրոցս»։

Նոր կտակարանաց սկիզբը Թուղթ Եւսեբի, համաձայնութիւնք չորից աւետարանաց, ի ստորև իջիցն նոյնք համառօտագրեալք, որպէս ի Նախընթաց Ա. օրինակին. ի վերջ Մարկոսի «Յարուցեալ Յիսուս» մասն աւետարանին անջատ յամբողջութենէն. Ղուկայ նախադրութենէն ետքը հետևեալ յիշատակարանն. «Նորոգեցաւ և կազմեցաւ աստուածային մատեանս որ ասի աստուածաշունչ ձեռամբ անարժան և մեղսամած չարագործ և զազրալի գործով անարժէնութեամբ լցեալ և անօրէնութեամբ յաւելեալ... Գրիգորի մարմնով ապականեալ և հոգով և մտաւք մոլորեալ խլաթեցոյ։ Որ է սա դրախտ աստուածային, այգի վայելուչ, ծառ պտղալի, բազմանակ ամենունակ, պտուղ քաղցրահամ, ծաղիկ անթառամ, վարդ անուշահոտ, ծով համատարած, գետ յորդախաղաց, վտակ յորդարուխ. աղբեւր անմահութեան և ջուր կենդանարար, սեղան ամենառատ և հաց քաղցեալ և սովեալ ոգւոց մարդկան։ Եւ արդ նորոգեցաւ աստուածաշունչ գիրքս ի թվկիս Հայոց Ո և ԻՁ ամին, ի դառն և ի նեղ ժամանակի, որ անաւրէնութիւնն բազմացեալ և արդարութիւնն նուազեալ, յամենայն ոգւոյ սէր և միաբանութիւնն վերացեալ և հակառակութիւն և նախանձն սփռեալ և տարածեալ յամենայն տեղիս. խոնարհութիւն և հնազանդութիւնն մերժեալ. անափառութիւն և հպարտութիւնն հաստատեալ. սուտն յառաջեալ և ճշմարտութիւնն փախուցեալ։ Եւ այդ աղաչեմք զհանդիպողք և զընթերցող սուրբ աստուածաշունչ գրոցս. որ լի բերանով և ուղիղ սրտիւ և կատարեալ հաւատով մեղաց թողութիւն խնդրել յԱստուծոյ Սիմէոն սարկաւագին և ծնողաց նորին և ամենայն ազգականաց նորին կենդանեաց և հանգուցելոց։ Որ բազում ջանիւ ետ նորոգել և գրել և կազմել զաստուածախաւս և զաստուածապատում գիրս աստուածաշունչ ի յիշատակութիւն բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց. Աստուած իւրն վարձահատոյց լինի, և միոյն հազարապատիկ և բիւրապատիկ տացէ վարձս վաստակոց իւրոց, և նորոգէ նորափետուր զարդարէ զխոճայ Սիմէոն և զիւր որդիքն ընդ երկայնաւուրս առնէ անսասան և աներեր անտրտում անսաթաք ժամանակաւ պահեսցէ արարչագործն Աստուած մինչև ի խորին ծերութիւն, զինքն և զիւր ծաղկեալ որդիքն»... Ի վերջ աւետարանին Յովհաննու գրուած է իրք կնոջե ձեռագրոյ. և յետոյ անմիջապէս գիրքՅայտնութեան. ապա «Հանգիստ սուրբ առաքելոյն և աւետարանչին Յովհաննու».

digitised by A.R.A.R.@

ի վերջն յիշատակարան. « Ով աստուածաբան առաքեալ և աւետարանիչ որ և անպատմելի պատկաց եղեր արժանի. և անկեալ զանձօք փրկչին բոլորեցուն և մաքրեցար որպէս զոսկի ի հրոյ փորձեալ, զոր լեզու հողնոցն ոչ կարին դրուատել զտեղի հանգստեան քո։ Ցերեսս անկեալ արտասուաթոր դիմաւք պաղատիմ, զի ընդ քեզ լիցի մասն ստացուղի սուրբ կտակիս Ներբէս վարդապետի և անպիտան գրչի, և որ ասէ եթէ եղիցի»։

Այս Յառաջաբան Գործոց, և հետևեալքն՝ Թուղթք կաթողիկէ և այլն։ Զհետ կաթողիկէ Թղթոց՝ Աղերս Եդեսի, և յետոյ. «Յառաջաբան Պօղոսի առաքելոյ Նախակարգեալի գլուխ գրոցս՝ ինչպէս յ՚Ա. օրինակի, հանդերձ Թղթով Կորնթացւոց՝ առ Պօղոս, և սորա երրորդ Թղթովն առ Կորնթացիս։

Ցետ աստուածաշունչ գրոց՝ անմիջապէս կը դրուի Պատարագամատոյց (տես)։

Ի վերջն. « Այլ եւ զվերջին կապմող լուսազարդ տառիս ծաղկաւէտ բուրաստանիս զՀերապետ կրաւնաւոր, աղաչեմ յիշել ի տէր և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասել. զի խիստ փտեալ էր և բամբակ դարձեալ, և ի տեղիս տեղիս ցեցն էր ծակոտեալ. հազիւ կարացի ի կապ ածել. վասի որոյ առ ոտս անկեալ պաղատիմ մանկանդդ Սիոնի, զի յորժամ հանդիպիք սմա՝ լի բերանով Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողացն իմոց հոգեւորացն և մարմնաւորացն. և դուք յիշեալ լիջիք ի տեառնէ աստուծոյ ամէն։ Այլ և զհոգեւոր հայրն մեր. . (եղծեալ տող մի ի գրչագրին) չէր հանդիպիր որ տայր թուխթն...

« Դարձեալ յերես անկեալ պաղատիմ սուրբ և պատուական ուսումնասիրացդ և բանասիրաց անձանց։ Զի որք հանդիպիք սմա տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր. զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Պօղոս... եպիսկոպոս. զի ի ժամանակիս յայսմիկ որ էր ի Թիւս Հայոց ՊՁԸ, էր սա առաջնորդ սուրբ ուխտիս առաքելոց։ Եւ ի սորին աւուրքս չքահանա ոմն անուն Վարդան եղեւ գործողն Յուգայի. և մատնեաց զամենայն սրբութիւնք եկեղեցոյն՝ անօրինաց. զխաչ և զսկի, և բազում խաւար էած ազգիս Հայոց։ Որ և զաղէտ տարակուսանացն և զսկիծն սկ կարէ ընդ գրով արկանել, Զի յայսմ ամի տիեզերալոյս և քաջ բարեհնպատն Թովմա փախըստական էր եղեալ յազգէն Նեստորաց, ի գաւառէն Արծիոյ. և եկեալ հանդիպեցաւ ի սուրբ ուխտն առաքեալք, երկու վարդապետաքն և բազում գրոց աշակերտաքն։ Եւ ետես զպատուհասս ցասման... զի ամիրայն Մարաց որ ի Մուշ նստէր, յաւուր միում բազում զաւրաքն եկն ի վանքն, և սուտ քահանայն Վարդան ընդ նոսա, և ըմբռնեցին զքահանայքն, զոմն տանջեցին և զոմն ահաբեկ առնէին. մոռն յեկեղեցին, և քակեցին զմի կողմն եկեղեցւոյն. և հանին բազում խաչ և սկի և սրբոց նշխարքն, և տարան ի քաղաքն. ըստ այնմ որ ասէ ի սաղմոսն. Զթիկունս իմ հարին մեղաւորք։ Եւ սուրբ վարդապետքն և աշակերտքն և սրբասէր քահանայքն ողբ ի բերան առեալ լային ողբալով. և այնքան կսկծացին, մինչ զի զգիշերն ամենայն արթուն կացեալ, և խնդրեցին յաստուծոյ զաղաւոթիւն սրբութեանցն։ Իւ ի վաղիւն եկեալ երեց ոմն Մելքիսէդ անուն, և երթիր մասն ինչ ի խաչերոյն. և բազում խաչ և սկի կորեաւ. և այսու ամենայնի պատճառ այն պիղծ չքահանայն եղեւ որ անունն չէ յիշելոյ։ Որ և զպատասխանին՝ նա տացէ յաւուրքն դատաստանի. ամէն։

« Այլ և դարձեալ աղաչեմ յիշել ի տէր, զվերջին նորոգող և զկազմող տուողն որ ի վերայ սուրբ գրոցս երախտիք ունի. այլ և զնախախնամողն

աղաչեմ յիշման արժանի առնել. և եթէ մին՝ թխտի, կամ մին՝ սակաւ իրաց երախտիք ունի ի սուրբ գիրքս, զփոխարէնն յաստուծոյ առցէ աստ և ի հանդերձելումն. և եթէ որ զկազմելէն տա լի սրտիւ միոյն հազար աստուած փոխարէն տացէ նմա, և էնց համարի թող թէ զաստուածաշունչս բոլոր նա է տուեր գրել. զի թէպէտ նորոգողն է, թէպէտ նոր գրել տուօղն, ի միասին պիտի պսակին ի Քրիստոսէ»...

Նորագիր յիշատակարան մ'ալ. «Ես Պետրոս կրօնաւորս որ եկի ի սուրբ ուխտս որ կոչի Ղազարու վանք, որ և յաղդմանէ չարին մատնեցին զիս ի ձեռս անօրինաց. և ես գիշերն փախեայ և եկի աստ, զոր տէր աստուած անփորձ և անդրդուելի պահէ զՅօվաննէս վարդապետն և զիւր միաբանքն զտէր Մեսրովբն և զտէր Ստեփաննոսն որ ինձ քան զչափն աւելի հարկիս արարին... ի թվին ՌՃԺԷ. տանուտէրն կարիճն է»:

Գրչագրիս մէջ չկան նկարք. զարդագիրք, խորանք կամ վերնազարդքն ալ անշուք և առանց արուեստական ճարտարութեան. առ և օ անխտիր գործածուած կը տեսնուին. ի վերջ բայից յաճախ զանց կ'ըլլուի յ տառն:

Ստացողն՝ Ներսէս՝ եթէ չէ համանունն Պաղոնց կամ Պալիեանց, այլ մի է ի Միաբանելոցն կամ յՈւնիթորաց: Զայս կ'ակնարկեն բացայայտ վարդապետութիւնն բղխման Հոգւոյն սրբոյ, և յիշատակութիւն քահանայապետին Հռովմայ Յովհաննու:— Ի լուսանցս գրչագրիս նշանակին ուրեք և համեմատութիւնք ընդ լատինականին Ֆ (Ֆրանկն) տառով:— Աստուածաշունչն ամբողջ ամփոփեալ յ'953 էջս:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՆԱԲՈԼԷՈՆ Ա. ԵՒ ՀՐԵԱՅՔ

Այսօր մինչդեռ ուրիշ երկիրներու մէջ կը տեսնենք որ Հրէից կ'արգիլուին բացարձակապէս ստացուածք, նիւթական և բարոյական մտաւոր մշակութիւն, հետաքննական կը համարինք ցուցնել ընթերցողաց թէ ընդհակառակն ինչպէս Նաբոլէոն Ա. երկրի մշակութիւնը և արուեստից և գիտութեանց զբաղիլը միակ միջոց համարեր էր՝ հաւասարելու զՀրեայս ընդ այլ քաղաքացիս, և ազատել զիրենք ծանրը և գրեթէ յանհաւատալի զրպարտութեանց իր հպատակ ռամկին:

Հրեայք զՆաբոլէոն Ա. կը համարին իբրև հիմնադիր իրենց քաղաքական բացարձակ ազատութեան. իսկ միւս կողմէն հակառակորդք իրենց գործածին փաստ և վկայութիւն կը համարին նոյն իսկ Նաբոլէոնի Առաջնոյ ընդդէմ Հրէից հրատարակած ծայրայեղ և խիստ օրէնքները. ուստի այս երկու կարծեաց հակասութեան մէջ օգտակար է մանրամասնաբար փնտռել Նաբոլէոնի Առաջնոյ ընդ Հրեայս ունեցած յարաբերութիւնքն: Տարակոյս չկայ որ նա այս բանիս մէջ ալ

digitised by A.R.A.R.@